

**ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻՋԱՆԿՅԱԼ ԶԵԿՈՒՅՑ
2019թ. 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿ****ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ**

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկը ապահովեց հեռանկարային զարգացման ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացումը՝ շարունակելով կատարելագործել ծառայությունների մատուցումը՝ հիմնական շեշտը դնելով թվային բանկային ծառայությունների ընդլայնմանն ու զարգացմանը, ծառայությունների մատուցման բոլոր ուղիների և հնարավորությունների զարգացմանը, բանկային պրոդուկտների և ծառայությունների պարզեցմանը, սպասարկման մշակույթի և ուղիների կատարելագործմանը, ինչն ուղղակիորեն իրենց դրական ազդեցությունն ունեցավ Բանկի ոչ միայն ֆինանսական գործունեությունն արտացոլող ցուցանիշներում, այլ նաև ՀՀ բնակչության շրջանում զգալիորեն ապահովեցին Բանկի դրական հեղինակությունը և, ելնելով Բանկի գործունեության ուրույն սկզբունքներից՝ ամրապնդեցին Բանկի՝ որպես առաջատարի ընկալումը ՀՀ բանկային համակարգում:

Անդրադառնալով հիմնական ֆինանսական ցուցանիշներին՝ պետք է նշենք, որ Բանկը 2019 թվականի 1-ին կիսամյակում նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ ապահովել է ակտիվների ավելի քան 11% աճ: **Ակտիվները** 30.06.19-ի դրությամբ կազմել են 286 մլրդ դրամ, ընդ որում հաճախորդներին տրված վարկերը (համախառն վարկային պորտֆելը) կազմել է 206 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճելով 31 մլրդ դրամով (18%-ով) և կազմել ընդհանուր ակտիվների 72%-ը, որից,

- Անհատական վարկային պորտֆելը աճել է մոտ 21 մլրդ դրամով (27.6%-ով)
- Բիզնես վարկային պորտֆելը աճել է մոտ 10 մլրդ դրամով (9.9%-ով):

Բանկի ընդհանուր պարտավորությունները նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճել են մոտ 25 մլրդ դրամով կամ 11.3%-ով և կազմել 245 մլրդ դրամ:

2019թ. հունիսի 30-ի դրությամբ Բանկի **սեփական կապիտալը** կազմել է 40.6 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճելով 3.9 մլրդ դրամով կամ 10.6%-ով:

2019թ. 1-ին կիսամյակի Բանկի **զուտ շահույթը** կազմել է 2.34 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճելով 16%-ով:

Բանկի գործունեության շահութաբերության ցուցանիշները հետևյալն են՝ Կապիտալի շահութաբերություն՝ 11.4%, Ակտիվների շահութաբերություն՝ 1.65%:

Ծախս / Եկամուտ հարաբերակցությունը կազմել է 55.9%՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի 56.9% ցուցանիշի դիմաց:

2019թ.-ի առաջին կիսամյակում Բանկի հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունները բնորոշել են նրա վճարունակության, իրացվելիության բարձր մակարդակը՝ վարկային և իրացվելիության ռիսկերին դիմակայելու մեծ պոտենցիալը: Հիմնական տնտեսական նորմատիվները ամբողջ ժամանակաշրջանի ընթացքում եղել են ՀՀ ԿԲ սահմանված նորմատիվների թույլատրելի մեծության սահմաններում:

Բանկի ֆինանսավորման աղբյուրները

2019թ. առաջին կիսամյակի վերջի դրությամբ բանկի կողմից ներգրավված փոխառու միջոցների կազմում ամենամեծ տեսակարար կշիռը՝ 78.6%, կազմել են հաճախորդներից ներգրավված միջոցները: Սույն ցուցանիշը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճել է 22 մլրդ դրամով (12.8%-ով), ինչը վկայում է Բանկի նկատմամբ հաճախորդների վստահության, վարվող ճկուն սակագնային քաղաքականության և մատուցվող ծառայությունների որակի մասին: Բանկերից ներգրավված միջոցները կազմում են փոխառու միջոցների 3.5%-ը, այլ փոխառու միջոցները՝ 6.8%:

30.06.2019թ.-ի դրությամբ Բանկը տեղաբաշխել է 17.9 մլրդ ՀՀ դրամի դրամային, դոլարային և եվրոյով պարտատոմսեր, որոնք կազմում են փոխառու միջոցների 7.3%-ը:

2019թ. հունիսին Բանկը և Եվրասիական զարգացման բանկը (ԵԶԲ) ստորագրել են 6 մլն ԱՄՆ դոլար վարկային գծի պայմանագիր: Գումարն ուղղվելու է Հայաստանում Միկրո և ՓՄՁ վարկավորմանը: Ներգրավված միջոցները հնարավորություն կընձեռի ընդլայնելու Բանկի ֆինանսավորումը տնտեսության իրական հատվածում՝ աջակցելով Միկրո ու փոքր և միջին բիզնեսների զարգացմանը:

Այսպիսով, 2019թ.-ի առաջին կիսամյակի վերջի դրությամբ Բանկը գրանցել է սեփական և փոխառու միջոցների 16.6% հարաբերակցություն՝ 245.2 մլրդ ՀՀ դրամ փոխառու միջոցների և 40.7 մլրդ ՀՀ դրամ սեփական կապիտալի մեծությամբ:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

2019թ. առաջին կիսամյակի վերջի դրությամբ ՀՀ բանկային համակարգը բոլոր էական ցուցանիշների գծով արձանագրել է աճ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ: Բանկային համակարգի ակտիվները աճել են 16.74%-ով՝ կազմելով 5,256.47 մլրդ ՀՀ դրամ, պարտավորությունները հաճախորդների նկատմամբ՝ 16.08%-ով՝ կազմելով 3,042.39 մլրդ ՀՀ դրամ, ընդհանուր կապիտալի գծով արձանագրվել է 7.78% աճ և կազմել 788.89 մլրդ ՀՀ դրամ: 30.06.2019թ.-ի դրությամբ ՀՀ բանկային համակարգի զուտ շահույթը կազմել է 38.45 մլրդ ՀՀ դրամ, որը 7.06%-ով գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը:

Բանկը 30.06.2019թ. դրությամբ բանկերի կողմից հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների տվյալների հիման վրա հաշվարկված ֆինանսական ցուցանիշներով ՀՀ բանկային համակարգում զբաղեցնում է՝

- ակտիվներ՝ 7-րդ տեղ (285.8 մլրդ դրամ կամ համակարգի 5.4%),
- պարտավորություններ հաճախորդների նկատմամբ՝ 6-րդ տեղ (198.6 մլրդ դրամ կամ համակարգի 6.5%),
- վարկային ներդրումների ծավալով՝ 6-րդ տեղ (202.2 մլրդ դրամ կամ համակարգի 6.2%),
- ընդհանուր կապիտալ՝ 10-րդ տեղ (40.7 մլրդ դրամ կամ համակարգի 5.2%):
- զուտ շահույթ՝ 7-րդ տեղ (2.3 մլրդ դրամ կամ համակարգի 6.1%),

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

2018թ. և 2019թ. առաջին կիսամյակը բավական հաջող ընթացք ունեցան Բանկի համար: Բանկն ամրապնդեց իր դիրքը հայաստանյան առաջատար բանկերի շարքում՝ որպես կայուն, իրացվելի, մրցունակ բանկ՝ ապահովելով ծառայությունների և պրոդուկտների մեծածավալ ցանկ:

Բանկի տեսլականն է դառնալ առաջին նախընտրության բանկ Հայաստանում:

Բանկի առաքելությունն է բավարարել մեր հաճախորդների ֆինանսական պահանջները և աջակցել նրանց՝ հասնել ֆինանսական հաջողության՝ ապահովելով սպասարկման բարձր որակ և բանկային ծառայությունների հասանելիություն թե Բանկի սպասարկման ցանցում և թե հեռահար բանկային ծառայությունների հնարավոր բոլոր եղանակներով:

Բանկը հաճախորդներին ծառայություններ մատուցելիս որդեգրել է հետևյալ արժեքները.

- Հասանելիություն
- Մատչելիություն
- Նորարարություն
- Տեղեկացվածություն
- Աջակցություն
- Սրտացավություն

Բանկը կիրառում է հետևյալ կորպորատիվ արժեքները.

- Թիմային աշխատանք
- Պատասխանատվություն
- Որոշումների կայացման իրավասությունների պատվիրակում
- Ազնվություն
- Ուսուցում զարգացում
- Ոգևորություն:

2019 թվականի առաջին կիսամյակի ընթացքում իրականացված աշխատանքներ, ակցիաներ, ներդրված ծառայություններ և նորամուծություններ.

1. Իրականացվել է ՓՄՁ ֆինանսավորման ակցիան:
2. Ներդրվել են «Ագրո» և «Գյումրի Ագրո» վարկատեսակները:
3. Տրվել է առցանց վարկավորման զարգացման II-րդ փուլի մեկնարկը՝ նախատեսված Բանկի հաճախորդ չհանդիսացող անձանց համար:
4. Կիսամյակի ընթացքում իրականացվել են վարկավորման մի շարք ակցիաներ, մասնավորապես՝ ոսկու գրավով ապահովված վարկերի/վարկային քարտերի, ինչպես նաև այլ ֆինանսական կազմակերպությունում գործող անշարժ գույքի ձեռքբերման/վերանորոգման/կառուցապատման, անշարժ գույքի գրավադրմամբ այլ վարկերի/վարկային քարտերի՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ տեղափոխման և այլն: Հավելենք, որ 2019թ. առաջին եռամսյակում Կոնվերս Բանկն արժանացել է Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի Առևտրի աջակցման ծրագրի «Տարվա գործարքը 2018 - Կանաչ առևտուր» մրցանակին՝ Հայաստանում ջերմոցային ենթակառուցվածքների էներգաարդյունավետության բարձրացմանն աջակցելու համար:
5. Մշակվել և գործարկվել է «Converse4Women» բանկային ծառայությունների փաթեթը, իսկ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության կողմից իրականացվող «ՀԲԸՄ Կին

ձեռներեցներ» ծրագրի մասնակիցների համար իրականացվել է ակցիա՝ սկսնակ /startup/ և գործող բիզնեսի ՓՄՁ ֆինանսավորման, ինչպես նաև արտոնյալ պայմաններով բանկային որոշ պրոդուկտների տրամադրման նպատակով:

6. ԱՀ Գյուղի և գյուղատնտեսության աջակցման հիմնադրամի հետ համագործակցության շրջանակներում սահմանվել են ֆինանսական վարձակալությամբ գյուղատնտեսական տեխնիկայի տրամադրման պայմանները:

7. Առաջնային շուկայից /«Տոռա Պրեմիում» ՍՊԸ/ ՀՀ ռեզիդենտ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար ավտոմեքենայի ձեռքբերման նպատակով գործարկվել է վարկավորման ակցիան:

8. Սահմանվել են իրավաբանական անձանց և/կամ անհատ ձեռնարկատերերի համար «ԱՎԱՆԳԱՐԴ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ հետ համագործակցության շրջանակներում ավտոմեքենայի ձեռքբերման կամ ֆինանսական վարձակալությամբ տրամադրման ակցիայի պայմանները:

9. Քարտային ոլորտում ևս Բանկը տարվա ընթացքում հանդես եկավ բազմաթիվ լոյալության ծրագրերով, իրականացված միջոցառումներից կարելի է առանձնացնել.

9.1. Գործարկվել է MasterCard Moneysend միջազգային քարտից քարտ փոխանցումների համակարգը:

9.2. Բանկի Վիզա քարտապանների համար իրականացված անկանխիկ գործարքների խթանմանը նպաստող «Վիզա դեպի Եվրոպա» ակցիան, որի շրջանակներում խաղարկվեց 10 ուղեգիր դեպի Եվրոպա:

9.3. Կանանց միամսյակի կապակցությամբ ակցիաները /այդ թվում՝ գարնանային միավորների կուտակման ակցիան, որի շրջանակներում խաղարկվեց ճամփորդական փաթեթ դեպի Շրի Լանկա/:

9.4. Քարտատերերի համար իրականացված Cash Back ակցիաները՝ սպասարկման սահմանված կետերում անկանխիկ գործարքների դիմաց:

9.5. Նախատեսվում է մոտ ժամանակներում իրականացնել Sticker, Mini Fob քարտերի թողարկում:

10. Ուսանողների և վերջիններիս ընտանիքների անդամների համար ներդրվել է արտոնյալ պայմաններով ծառայությունների փաթեթը:

11. Վերագործարկվել է «Կոնվերս 25» ժամկետային ավանդի ներգրավման ակցիան առցանց ներդրման լրացուցիչ խրախուսմամբ:

12. «Կոնվերս Բանկ» ՓԲԸ հաշվետեր հաճախորդների կողմից միջազգային փոխանցումների իրականացման հատուկ սակագների կիրառման ակցիա է իրականացվում:

13. Բանկում Project management-ի շրջանակներում իրականացվել են մի շարք նախագծեր՝ ուղղված բիզնես գործընթացների օպտիմալացմանն ու սպասարկման որակի բարձրացմանը:

14. 2019թ. առաջին կիսամյակում «Կոնվերս Բանկ» ՓԲԸ ներդրեց նոր, արդիականացված "Զանգերի կենտրոն" ծառայություն՝ ինքնասպասարկման հնարավորությամբ, որը հաճախորդների սպասարկման հարմարավետության, արագության և հասանելիության ուղղությամբ հերթական քայլն է:

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Բանկում գործող կառավարման համակարգի զարգացումը ենթադրում է կառավարման բաց, մրցունակ, արդյունավետ համակարգի կատարելագործում, Բանկի գործունեության համապատասխանեցում արտաքին միջավայրի մշտապես փոփոխվող պայմաններին, ֆինանսական համակարգում գնալով սրվող մրցակցությանը դիմակայում, որոշումների կայացման ճկունության աստիճանի և պատասխանատվության մակարդակի բարձրացում, կորպորատիվ կառավարման համակարգի զարգացում, որն ուղղված կլինի հորիզոնական և ուղղահայաց փոխհարաբերությունների կատարելագործմանը, Բանկում բիզնես գործընթացների կառավարման արդյունավետության բարձրացմանը և Բանկի գործունեության միջազգային լավագույն փորձի համապատասխանեցմանը՝ ապահովելով «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» Կանոնակարգ 4-ի պահանջները:

Բանկի բաժնետերերը և ղեկավարությունը հավատարիմ են Բանկի հեռանկարային զարգացմանն ուղղված իրենց որդեգրած ուղուն. այն է Բանկի գործունեության շարունակական արդիականացում, սպասարկման ցանցի ընդլայնում և մատուցվող ծառայությունների որակի բարձրացում:

Բանկի շահութաբաժնային քաղաքականությունը

Բանկն իրավունք ունի որոշում ընդունել (հայտարարել) իր բաժնետերերին եռամսյակային կամ տարեկան շահութաբաժինների վճարման մասին:

Բանկում միջանկյալ շահութաբաժիններ կարող են վճարվել եռամսյակային պարբերությամբ, որոնց վճարման և շահութաբաժինների չափի որոշումն ընդունում է Խորհուրդը:

Որպես միջանկյալ շահութաբաժինների չափի որոշման կողմնորոշիչ հիմք կարող է ընդունվել տրամադրված վարկերի և ներգրավված ավանդների տվյալ եռամսյակի միջին տոկոսադրույքների տարբերությունը: Բաժնետերերին շահութաբաժինների վճարման

սահմանափակումները կապված են Բանկի ակտիվների հետագա աճի համար անհրաժեշտ կապիտալի մակարդակի պահպանմամբ, զուտ շահույթի չափի, ՀՀ ԿԲ նորմատիվների պահպանման հետ:

ՌԻՍԿԵՐ ԵՎ ԱՆՈՐՈՇՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայրենական և համաշխարհային տնտեսություններում տեղի ունեցող իրադարձությունները իրենց ազդեցությունն են թողնում Բանկի կողմից թե՛ ներքին և թե՛ արտաքին շուկաներում իրականացվող գործունեության վրա: Օրըստօրե ավելանում են արտաքին աշխարհի մարտահրավերները, որոնց դիմակայելու համար Բանկը իրականացնում է ռիսկերի պարբերական մոնիտորինգ՝ մշակելով համապատասխան միջոցառումների ծրագրեր:

Հավելված 1-ով ներկայացված ֆինանսական հաշվետվություններում ներկայացվում է “Ռիսկի կառավարում” թիվ 30 ծանոթագրությունը, որում բացահայտված են Բանկի գործունեությանը բնորոշ հիմնական ռիսկերը և դրանց գնահատմանն և կառավարմանն ուղղված՝ Բանկի կողմից կիրառվող քաղաքականությունը:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

2019 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ